



19 - 31 ՅՈՒՆԻՍ 2025
ՀԱՅԱՍՏԱՆ

Նախկին ֆորումականներ



Արտակ Իշխանեան

Նահատակուած
Արցախի 44-օրեայ պատերազմին



Էտուիկ Իսաղուլեան

մահացած Միացեալ Նահանգներ

**Այս ձեռնարկը կը նուիրենք անոնց
անմահ յիշատակին:**



ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Համազգայինի Երեւանի գրասենեակի տնօրէն

Երեսուն տարի շարունակ Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը հաւատարիմ իր ուխտին՝ աշխարհի տարբեր երկրներից հայ ուսանողութեանն առիթ է ընձեռել մէկտեղուելու հայրենիքում: Հայրենասիրական մթնոլորտում երիտասարդները եւս մէկ անգամ հնարաւորութիւն են ունենում ծանօթանալու մեր պատմութեան անցեալին ու ներկային, վայելելու հայոց մշակոյթի վեհութիւնն ու շքեղութիւնը:

Համազգայինի ուսանողական հաւաքը՝ ֆորումը, մասնակիցների համար անմոռանալի է դառնում ոչ միայն հայրենիքը տեսնելու ու վայելելու իմաստով, այլ՝ հայրենասիրութեան դաս, որը միշտ այսօր էլ ուսուցանում է անառարկելի այն ճշմարտութիւնը, որ Հայրենիքին հարկաւոր է նուիրուել անվերապահ, տալ կարելին, առանց սակարկելու:

Վստահ ենք այս տարի էլ նոյն առաքելութեամբ 30-ամեայ ֆորումը շարունակելու է իր երթը, հաւատալով, որ ինքնութիւնը պահելու միակ երաշխիքը հայրենիքը ճանաչելն է՝ մըղտբում ու հոգում այն պահելու հաստատակամութեամբ:

ՇՈՒՇԻԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ

Ֆորումի հիմնադիր յանձնախումբի անդամ



Երազ մը փորձեցինք իրականացնել,
Գործ մըն էր աշխատեցանք կազմակերպել,
Յետաքրքրական,
Եւ խանդավառող:

Հասանք մեր նպատակին՝
համախմբելով երիտասարդներ աշխարհի չորս կողմերէ
Ճանօթացնելով մեր հարուստ ժառանգութիւնը
Ահա 30 տարիներ բոլորեցինք:

Մեր նպատակին հասանք,
Մեր երազը իրականացաւ:
Օ՛ն, դէպի նորանոր տարիներ:



ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏԵԱՆ

Համազգայինի Երեւանի գրասենեակի
նախկին տնօրէն

Համազգայինի ֆորումը 30 տարեկան է: Տարիներն ի՞նչ արագ են անցել՝ յետեւում թողնելով հազարաւոր երիտասարդների՝ Հայրենիքը սիրելու, ճանաչելու, Հայրենիքով լիցքաւորուելու, նրան նուիրուելու ու նրա անբաժան մասը զգալու, նրանից չբաժանուելու ու սեփական ինքնութիւնը վերահաստատելու պարտքն ու յանձնառութիւնը: Հաւատացեք, Հայրենիքը հարստացել է ձեզանով, Հայրենիքը, որն այսօր աւելի քան իւրաքանչիւր հայի հոգատարութեանն ու սիրոյ կարիքն ունի:

Շնորհաւորում եմ Համազգայինի մեծ ընտանիքին այս ապրող, իրեն հաստատած նախաձեռնութեան համար: Շնորհաւորում եմ նաեւ այն նուիրեալներին, ովքեր իրենց երազանքները կեանքի կոչեցին եւ Երիտասարդական ֆորումը դարձաւ Համազգայինի նշանային ձեռնարկներից մէկը:

ՆՈՐԱ ԹԱՇՃԵԱՆ

Համազգայինի ֆորումի նախկին պատասխանատու



Տասնամեակներ շարունակ Համազգային Հայ կրթական եւ մշակութային միութիւնը կը շարունակէ իր նուիրական առաքելութիւնը՝ սատարելով հայ ինքնութեան պահպանման եւ սփիւռքահայ երիտասարդութեան ազգային դաստիարակութեան գործին: Այդ առաքելութեան կարեւոր ծրագիրներէն մէկը Համազգայինի ուսանողական ֆորումն է, որ ամէն տարի կը համախմբէ աշխարհի տարբեր ծայրերէն ժամանած հայ երիտասարդներ՝ գանոնք միաւորելով պատմութեան, մըշակոյթի եւ հայրենաճանաչութեան շուրջ:

Այս ֆորումը ոչ միայն բացառիկ կարելիութիւն մըն է՝ ծանօթանալու հայոց պատմութեան ու մշակոյթի գանձերուն, այլ նաեւ կամուրջ մըն է՝ սփիւռքահայ երիտասարդներու միջեւ ծանօթութիւն ստեղծելու, ընկերական կապեր հաստատելու, այժմեական տարբեր թեմաներ քննարկելու, ազգային ու մշակութային ծրագիրներու մասնակցելու եւ հարստացնելու իրենց ինքնութեան ու արմատներուն մասին գիտելիքներ:

Համազգայինի ուսանողական ֆորումին արդիւնքը արդէն կ'երեւի. հարիւրաւոր նախկին մասնակիցներ այսօր գործօն դերակատարներ են իրենց համայնքներուն մէջ:

Այս օրերուն, երբ իւրաքանչիւր հայ համայնք կը դիմագրաւէ տարբեր մարտահրաւերներ՝ գաղթ, ծուլում, ազգային արժեքներու մոռացում, Համազգայինի առաքելութիւնը կ'ունենայ կենսական կարեւորութիւն՝ դառնալով ամուր կապ մը տարբեր վայրերու մէջ ապրող հայ երիտասարդներուն միջեւ:

Յաջողութիւն Համազգայինի ֆորումին:



ՍԵԼԼԱ ԹՆՃՈՒԿԵԱՆ

Ֆորումի հիմնադիր յանձնախումբի անդամ

Մեծ ուրախութեանք եւ յուզմունքով կ'արձանագրեմ իմ սրտի խօսքս այս անցնող 30 տարիներու ընթացքին այն ծրագրին, որ համախմբեց հարիւրաւոր աշխարհացրիւ հայ երիտասարդներ նախ Լիբանանի, ապա Հայաստանի մէջ:

Համազգայինի Պատգամաւորական ժողովին իմ բերած առաջարկս, որ համախմբել էր հայ համալսարանականներ եւ 15 օրերու ընթացքին հայեցի դաստիարակութիւնն ու հաճելի ժամանցը միախառնուած ծրագիրով մը հրամցնել էր նոր սերունդին՝ իր մանրամասնութեամբ մնաց իմ ուսերուս: Ուստի, առանց տատամսելու Կեդրոնական վարչութեան ներկայացուցի մանրամասն ծրագիր մը, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ, ապա յանձնառու խումբով մը անցաւ գործադրութեան: Համազգայինի համասփիւռեան մեծ ընտանիքի, Փարիզի, Լոս Անճելըսի, Մոնթրէալի, Լոնտոնի եւ Պէյրութի ժրաջան աշխատող անդամներէն կազմուեցաւ յանձնախումբ մը, որ երկար ուսումնասիրութիւններէ ետք կազմակերպական աշխատանքներ ձեռնարկեց Պէյրութի Համազգայինի գրասենեակին հետ միասնաբար:

Սկսելու համար թիրախ ունեցանք Լիբանանէն գաղթած հայ ընտանիքներու համալսարանական զաւակները, որոնց ծնողները մեծամասնութեամբ աւարտած էին Հայ Ճեմարանը: Զաջ գիտէինք, որ բոլորը կարօտով պիտի վստահէին իրենց զաւակները այն ուխտավայրին, ուր իրենք շնչած էին Աղբալեաններու, Շանթերու հիմնած եւ ուսուցած հայրենիքի ոգին: Երբ Պէյրութի մէջ Ֆորումի ծրագիրը պաշտօնապէս

յայտարարուեցաւ, ոչ միայն Համազգայինի մեղուաբոյնը գործի լծուեցաւ, այլ նաեւ Ճեմարանի շուրջի հայ ընտանիքները խանդավառութեամբ ձեռք երկարեցին՝ նոր գաղթած իրենց բարեկամներու զաւակները տեսնելու սոյն դպրոցի յարկին տակ: Եւ այսպէս Համազգայինի հսկայ մեքենան էր, որ այլեւս կը գործէր՝ մամուլի մէջ յայտարարութիւններով, համալսարաններու մէջ երիտասարդական ակումբներու հետ կապի մէջ մտնելով: Առ այդ, մեծ թիւով արձանագրութիւնները չուշացան: Չանագան երկիրներէ աւելի քան 80 մասնակցողներ եկան փաստելու, որ Հանազգայինի Ֆորումը սփիւռքահայ երիտասարդին պետքերուն ճիշդ տեղն էր:

Համախմբումը իրագործելու համար, հարկ եղաւ Համազգայինի շէնքերու նորոգման, թղթածրարներու, տարազներու, գլխարկներու եւ երիտասարդ առաջնորդներ կազմաւորելու պատրաստութեան: Հրաւիրուեցան համաշխարհային հանրածանօթ դասախօսներ, երաժիշտներ եւ մշակութային մարզի զանազան մասնագէտներ: Ծրագրի միտքը միշտ եղաւ մշակութային հարստութիւնը, հրատապ նիւթերու կլոր սեղանները, հայկական պարի, երգի, զանազան բնագաւառներու ծանօթացումը եւ գիշերային զուարճալի ժամանցներ հրամցնելը:

Տարիներու ընթացքին Համազգայինի համալսարաններու այս համախմբումը տեղափոխուեցաւ Հայաստան եւ Արցախ, հետեւաբար հայրենի մշակութային հարուստ հողին վրան ա՛լ աւելի կարողացանք ճոխացնել մեր ծրագիրը:

30 տարին բոլորած ենք արդէն եւ մեծ գոհունակութիւն է տեսնել, որ ծրագիրը հասած է մասնագիտական մակարդակի՝ երիտասարդ յանձնախումբերու նախաձեռնութեամբ, նորանոր գաղափարներով, արդիական միջոցներով, մեծամասնութեամբ հայրենի դասախօսներով՝ Հայաստանի հողին վերայ: Ֆորումը կը շարունակէ իր առաքելութիւնը, 30 տարիներու ընթացքին ականատես եղանք Ֆորումի մասնակցող երիտասարդութեան արմատներու զարթոնքի երեւոյթին: Տասնը-

հինգ օրերու ընթացքին երիտասարդը կը կապուի իր արմատներուն, մշակոյթի հանդէպ հետաքրքրութեան գիտակցութեան եւ յանձնառութեան փաստերը բազմաթիւ են:

30-ամեակի շէմին մեր խորին շնորհակալութիւնները կ'ուզենք յայտնել անցեալի եւ ներկայի դասախօսներուն (որոնցմէ դժբախտաբար շատեր առյաւէտ բաժնուած են մեզմէ), յանձնախումբերուն, պատասխանատուներուն եւ մասնաւորապէս մեծ թիւով նուիրատուներուն, որոնք հսկայական գումարներով ծրագրի նիւթականը ապահովեցին եւ հաւատացին Ֆորումի առաքելութեան, եւ միասնական ուժերով սատար հանդիսացան այս ծրագրի իրականացման եւ շարունակականութեան:

Անխտիր բոլորի՛ն, բոլորի՛ն վարձքը կատար:

Շնորհաւոր 30-ամեակ:

ՎԻՉԵՆ ԹԻՖԵՆԸՏԵԱՆ

Ֆորումի դաստիարակչական ծրագրի
նախկին պատասխանատու



Համազգային Ֆորումի մեկնարկի օրեն իսկ, մշտական հա-
ւատացող մը եղած եմ այդ ծրագրին կարելորութեան, որով-
հետեւ անոր մէջ տեսած եմ Համազգայինի առաքելութեան
գործնականացումը: Այսօր, երբ ծրագիրը կը բոլորէ իր երե-
սուներորդ տարին, կ'անդրադառնանք թէ հայ երիտասարդը
հայութեան եւ հայրենիքին շաղկապող բազմաթիւ ծրագրե-
րու շարքին մէջ իր պատուաւոր տեղը ունի Ֆորումը: Հայաս-
տանի անկախութենէն ի վեր, Ֆորումը հայ երիտասարդին
պատեհութիւնը կու տայ հաղորդուելու հայրենի հողին վրայ
ապրող՝ բայց մանաւանդ ծաղկող մշակոյթին հետ:

2010-ական թուականներուն, Ֆորումին մօտէն առնչուելու
եւ անոր յայտագրին մասնակցելու մէկէ աւելի առիթներ ունե-
ցած եմ, ու ամէն անգամ հաստատած՝ թէ ինչքան արդիւնա-
ւետ նախաձեռնութիւն մըն է Համազգայինի Ֆորումը: Հայկա-
կանութեամբ թաթաւուն տասնհինգ օրերու ընթացքին, վկան
եղած եմ Ֆորումի նոյնիսկ ոչ-հայախօս երիտասարդ մասնա-
կիցներուն ապրած հոգեփոխութեան, երեւոյթ մը՝ որ անուրա-
նալի փաստն է ծրագրի յաջողութեան:

Համազգայինը այսօր ճիւղաւորած է հայ երիտասարդը իր
մշակոյթին հետ կապելու առաքելութիւնը: Ֆորումի օրինա-
կով, Հիւսիսային Ամերիկայի Համազգայինի երեք շրջանները
տասը տարիներէ ի վեր կը կազմակերպեն ArtLinks երիտա-
սարդական շրջուն հաւաքները, ԱՄՆի Արեւելեան - Արեւմուտ-
եան շրջաններուն եւ Գանատայի մէջ: Այդ ծրագիրը մեծ ըն-

դունելություն գտած է նորահաս սերունդին մօտ: Նոյնօրինակ ծրագիր մըն է մի քանի տարիներէ ի վեր գործող Համագ-գայինի Կեդրոնական վարչութեան կազմակերպած YouthLinks Europe ծրագիրը, որ մէկ շաբաթավերջի ընթացքին ի մի կը բերէ եւրոպաբնակ հայ երիտասարդներ, անոնց տրամադրե-լով հոյլ մը մշակութային եւ ազգային գիտելիքներ:

Սփիւռքածին երիտասարդին հայկական ինքնութիւնը ամ-րապնդող Համագգայինի այս երեք ծրագիրները շօշափելի գրաւականներ են, որ միութիւնը բոլոր տուեալները ունի նո-րանոր յաջողութիւններու հասնելու եւ հայեցի դաստիարա-կութիւն ջամբելու յաջորդ սերունդներուն:

Բարի երթ Համագգայինի Ֆորումին:



ՅԱԿՈԲ ՀԱՄԱԹԵԱՆ

Համազգայինի ֆորումի նախկին պատասխանատու

Իբրեւ հիմնադիր կազմի անդամ, Համազգայինի Կեդրոնական վարչութեան ֆորումի ծրագիրը նոր ու հարուստ կենսափորձի մը դիմաց դրաւ ինծի: Երեկուան պէս կը յիշեմ առաջին ծրագրի կազմութիւնը, յայտագիրներու պատրաստութիւնը եւ աւելին, Պէյրութի «Նշան Փալանճեան» ճեմարանին մէջ ստեղծուած խանդավառութիւնը:

Պատասխանատու կազմին համար ալ մեծ փորձառութիւն դարձաւ այս համախմբումը, տրուած ըլլալով որ միութենական ընթացիկ հաւաք մը չէր, այլ տարբեր միջավայրերէ եկած, երբեմն նոյնիսկ հայերէն լեզուով չարտայայտուող, բայց իրենց ծնողներէն ժառանգած ճեմարանական հպարտութեամբ եւ յիշատակներով տոգորուած երիտասարդներու ստուար թիւով մը՝ 85 մասնակիցներով սկսաւ ֆորումի առաջին հաւաքը: Մթնոլորտը դարձաւ շատ աւելի գօտեպնդող, երբ ծնողներէն ալ շատեր այդ օրերուն ժամանեցին Լիբանան եւ մասնակից դարձան կարգ մը յայտագիրներու:

Այդ օրերուն, Լիբանան նոր վերագտած էր իր խաղաղութիւնը եւ Պէյրութի կեանքը սկսած էր վերաթարմանալ: Դաստիարակչական ծրագիրներու կողքին, բնականաբար ընկերային պահերը նաեւ յիշատակելի առիթներու կը վերածուէին: Դժուար էր անշուշտ, ոչ միութենական այսպիսի հաւաքի մը ընթացքին, կարգապահութիւնը եւ խստապահանջութիւնը դարձնել ամբողջական: Այս հանգամանքը պատասխանատու կազմին գործը կը վերածէր աւելի յանձնառու եւ դժուար: Այս ալ դարձաւ իր կարգին կարեւոր փորձառութիւն:

Իբրեւ անմոռանալի յուշ կրնամ արձանագրել թէ որեւէ հաւաքէ կամ պտոյտէ առաջ եւ ետք փոխադրակառքերու մէջ մաս-

Նակիցներու ներկայութեան ստուգումը կը կատարէինք եւ այս իմաստով միշտ ալ ուշացումները եւ մեր սպասումները սովորական դարձած էին: Երեկոյ մը սակայն, ապրեցանք վախի ու սարսափի զգացում մը, երբ երկար սպասումէ ետք, երկու մասնակիցներ ուշացան փոխադրակառք բարձրանալու: Պարտաւորութեանք փոխադրակառքերը ուղարկել եւ քանի մը պատասխանատուներով Բաուշէի շրջանը սպասենք բացականերու ժամանման: Ժամանակը սկսաւ անցնիլ ու դառնալ ճնշիչ: Սկսանք մեր փնտռողներուն որոնք սակայն ապարդիւն անցան եւ մտահոգութիւնը ծանրացաւ: Պարտաւոր էինք այլեւս ապահովական մարմիններուն հետ կապի մէջ մտնել, որպէսզի հարցը հետապնդեն:

Անշուշտ պատմութիւնը ունի զաւելշտային ուրախ աւարտ: Երկու մասնակիցները ճաշարանէն դուրս եկած եւ խանդավառ ու հետաքրքրուած Լիբանանեան գիշերով, Բաուշէի մայթին երկայնքով քալած են եւ իրենց ճամբան երկարած: Վերադարձած են ճաշարան երբ արդէն երկար սպասումէ ետք խումբը եւ նաեւ մենք շարժած էինք: Ստիպուած անոնք ապահոված են փոխադրամիջոց եւ վառորդին փոխանցած ճեմարան դպրոցի անունը:

Ըստ երեւոյթին այս վառորդը միայն մէկ հայկական վարժարան կը ճանչնար՝ «Շամլեան-Թաթիկեան» եւ ուղղուած է Պուրճ Յամուտ: «Շամլեան-Թաթիկեան»-ի թաղը հասնելէ ետք ֆորումականները զգացած են, որ սխալ ու անծանօթ վայրի մէջ են եւ քիչ մըն ալ վախցած: Երիտասարդները թէեւ Պուրճ Յամուտը չէին տեսած, բայց առաջարկած են վառորդին գիրենք տանի «Սարդարապատ» ակումբ: Վառորդը հարց տրւած է թէ արդե՞օք «Նատի Արման» է իրենց մատնանշածը: Երիտասարդները չհասկնալով վառորդին պնդած են «Սարդարապատ», որովհետեւ ծնողներէն այդ անունը լսած ու դրոշմուած է իրենց ենթագիտակցութեան մէջ: Այդ պահուն թաղեցիները միջամտած են եւ վառորդին փոխանցած որ «Նատի Արման»-ը Սարդարապատ ակումբն է: Սարդարապատի տղոց հետ բաւական ուշ ժամու, ուսանողները հասան ճեմարան:

Օրերը արագ սահեցան, եւ արդէն 30 տարի:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ֆորումի դաստիարակչական ծրագրի
նախկին պատասխանատու



ՀԱՅ-ՀԱՅՐԵՆԻԺ-ԱՏԵԱՆ

1995- ին, երբ երիտասարդական խմբաւորման ծրագրումի մասին կը խորհրդակցէինք, հարցադրումներու տարափ մը կը խուժէր մտքիս մէջ:

Ովքե՞ր պիտի ըլլան եկողները, ի՞նչ ակնակալութիւններով կու գան, ի՞նչ է այն ոյժը, որ գիրենք կը մղէ երթալու, երկու շաբաթ ապրելու՝ աշխարհի տարբեր շրջաններէ եկող իրենց նման երիտասարդներու հետ հայկական ջերմ մթնոլորտի մը մէջ: Հաճոյքին հետ, տեսնելու, ծանօթանալու իրարու, տեսնելու եւ աւելի ըմբռնելու՝ հասարակած մտահոգութիւնները, թռիչքները, երազներն եւ ապագան...

Ի՞նչ էր այդ մղիչ ուժին կախարդանքը:

Այս հարցադրումները մտային մարտահրաւերներու լայն դաշտ մը կը բանային գիտակցական աշխարհիս մէջ:

Թէեւ համալսարանական դաստիարակչական փորձառութենէ մը կու գայի, բայց այս մէկը տարբեր էր: Համալսարանին մէջ, ուսանողները միատեսակ հիմք ունէին, որը պիտի զարգացնէի եւ նոր կառոյցներ աւելցնէի: Սակայն հաւաքին եկողները տարբեր երկիրներու միջավայրերէն ազդուած տղաք ու աղջիկներ էին, որոնք տարբեր ընկերային ըմբռնումներէ ազդուած էին:

Երիտասարդ - երիտասարդուիները կու գային՝ Ամերիկայէն, Արցախէն, Իրանէն, Լիբանանէն, Սուրիայէն, Ֆրանսա-

յեն... երկիրներ, որոնք ընկերային ըմբռնումներով եւ յատկապէս հոգեբանօրէն, իրարմէ աշխարհներով հեռու էին... Տարրալոյծ միջավայր մը արդարեւ:

Այս տարրալոյծ միջավայրին մէջ պիտի ըլլայի եւ ասիկա մեծագոյն մարտահրաւերն էր ինծի համար:

Ինչպէս պիտի գտնուէր այն անտես ՄՏԱՅԻՆ-ԳԻՏԱԿՑԱԿԱՆ թելը, որով կարելի պիտի ըլլար այս տարրալոյծ միջավայրը ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ վերածել:

Նկատելով որ երիտասարդները տարբեր միջավայրերէ կու գային, ուրեմն նախ եւ ամենէն առաջ, պէտք էր այդ սերունդին ՅԱՍԿՆԱԼ: Բարեբախտութիւնը այն էր, որ բոլորն ալ, իրենց միջավայրերուն մէջ, հայութեամբ տոգորուած եւ հայութեան կառչած տղաք ու աղջիկներ էին: Ուրեմն առաջին հերթին, պէտք էր ԼՍԵ՛Լ անոնց իղծե՛րն ու մտահոգութիւննե՛րը: Այլ հօսքով ՃԱՆՉՆԱ՛Լ զիրենք:

Եւ այս հաւաքը, մտքիս մէջ, երկու կռուանի վերածուեցաւ՝ նախ միջավայրը ԱՏԵԱՆ մը պիտի ըլլար, ուր պիտի արտայայտուէր այս սերունդը: Երկրորդ, այդ միջավայրը ՅԱՅՈՒԹԵԱ՛ՄԲ պիտի բաբախէր եւ հարստացներ իրենց կեանքերը:

Եւ մտքիս մէջ, հաւաքը ստացաւ ՅԱՅ ԱՏԵԱՆ բանաձեւը:

Ուրեմն, ինչ որ պիտի ծրագրուէր, պէտք է երկու սիւներու փոխկապակցութեան վրայ հիմնուած ըլլար:

Խորիո՞րդը այս ծրագրին, սերունդ պատրաստել ներկայի՞ն եւ ապագայի՞ն համար:

Այդպէս ալ եղաւ՝ լսել այս երիտասարդ սերունդի մտահոգութիւնները եւ ազգային հարցերու նկատմամբ անոնց կարծիքները եւ զայն դաստիարակել ազգային անխախտ արժէքներով:

Ազգային արժէքներու մեծագոյն հիմնական կռուանը... ՅԱՅՐԵՆԻ՛ԸՐ պիտի ըլլար:

Այս ալ հաւաքի երրորդ հիմնական, անխախտելի սիւնը

պիտի ըլլար:

Հայաստան, որ մեր անցեալն ու ներկան ամբարած, մեր իմացական, զգացական եւ գիտակցական ապագայածիկ էութիւնն է:

Այսպէս, հաւաքին մասնակցողներու գործնական, դաստիարակչութիւնը, Հայաստանի մէջ պիտի ըլլար:

Հայաստան՝ մեր անցեալի, ներկայի եւ ապագայի միաձոյլ շաղկապողը:

Հաւաքին մասնակցողները, Հայաստանի մէջ, պիտի տեսնէին, շօշափէին, զգային, ապրէին դարերէն իրենց ժառանգ հասած սրբութիւնները: Պիտի գիտակցէին, որ՝ իրենց ապագան ա՛յս փոքրիկ, սուրբ ՀՈՂԻՆ հետ անքակտօրէն կապուած է:

Եւ, ահաւասիկ երեսուն տարի, սերունդեր եկան, եւ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՐԴԱԿԱՆ միջավայի մը մէջ ԱՊՐԵՑԱՆ:

«Հայ-Հայաստան-Ատեան»ի այդ երկու շաբաթներու ազդեցութիւնը ամբողջ կեանքի մը կռուանը հանդիսացաւ Սփիւռք ծնած եւ մեծցած սերունդին համար:

Փառք ու պատիւ Համազգայինին, նման ծրագիր մը գործադրելուն համար:

Ճանապարհը հարթուած է գալիք սերունդներուն համար:

Բարի՛ երթ, սիրելի սերունդներ:

Հայաստանն ու Հայութիւնը Ձեզի զօրակոչի կը հրաւիրեն:



ԱՐԻՆ ՊՈՒԼՈՒԶԵԱՆ-ԳԱԼՈՒՍԵԱՆ

Համազգայինի ֆորումի նախկին պատասխանատու

Համազգայինի կողմէ կազմակերպուած Ուսանողական ֆորումը պարզ հաւաք մը չէ, այլ անկէ շատ աւելին է: Անիկա ընտանիքի մը պէս ջերմ է, իր ստեղծած ուսանելի եւ անմիջական մթնոլորտով եւ արդիւնաւետութեամբ:

30 տարին արդէն ինքնին խօսուն փաստ է, անոր յաջողութեան եւ յարատեւութեան, որովհետեւ միայն ամուր հիմերու վրայ հիմնուած ծրագիրները կրնան գոյատեւել եւ դիմանալ ժամանակի զանազան փոթորիկներուն:

Երբ կը նշենք ֆորումի 30 տարիները, մենք կը յիշենք ոչ միայն թիւ մը, այլ կը մտաբերենք 30 տարիներու ընթացքին կերտուած յուշեր, մշակուած բարեկամութիւններ, մատուցած ծառայութիւն ու ցուցաբերուած նուիրում:

Ես խորապէս կը հաւատամ, որ իւրաքանչիւր ֆորումական իր սրտին մէջ ամուր պահած է այն իւրայատուկ պատկանելիութիւնը, որ զգացած է այդ օրերուն՝ մանաւանդ ապրելով ու շնչելով հայրենի հողին վրայ, ստեղծելով ծանօթութիւններ, իր սերնդակիցներուն հետ հաստատելով կապեր, որոնք երբեմն վերածուած են մնայուն ու սերտ բարեկամութիւններու: Այդ զգացումը ոգեշնչման աղբիւր դարձած է՝ ծառայելու մեր ժողովրդին՝ ոչ թէ պարտաւորութեամբ, այլ սիրայօժար՝ սիրով, գիտակցութեամբ, համոզումով ու հաւատարմութեամբ:

Ահա՛ թէ ինչու ֆորումը կ'անցնի պարզ ամառնային ուսանողական համախմբման մը ծրագրի սահմանը եւ կը դառնայ ապրուած յիշողութիւն, որ ժամանակի հետ չի խամրիր, այլ կը շողշողայ ու կը շողարձակէ աւելի փայլուն ու զօրաւոր, իր ճառագայթները երկարելով դեպի նոր լուսաւոր երեսնամեակներ:

ՀՐԱԶ ՄԻՍՈՆԵՍ

Ֆորումի հիմնադիր յանձնախումբի անդամ



Համազգայինի Ֆորումը ծնունդ առավ 1994-ին, Համազգայինի Պատգամաւորական երկրորդ ժողովի ընթացքին: Այդ ժողովը «պատմական» էր, որովհետեւ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար նորանկախ հայրենիքէն ներս: «Պատմական» էր նաեւ այն պատճառով, որ ժողովին կը մասնակցէին հայ մշակոյթի տիտաններ՝ Գեորգ Էմին, Ռազմիկ Դաւոյեան, Սօս Սարգսեան եւ ուրիշներ: Ես ալ բախտն ու պատիւը ունեցայ մասնակցելու այդ ժողովին եւ ականատես ըլլալու այդ նշանակալի պահերուն:

Հոն էր, որ առաջարկուեցաւ ամառնային երկշաբաթեայ երիտասարդական ճամբար-հաւաք մը կազմակերպել Լիբանանի մէջ՝ Համազգայինի Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանի յարկին տակ: Նպատակն էր, աշխարհի տարբեր անկիւններէն պարման-պարմանուհիներ միանային հայ մշակոյթի եւ ազգային դաստիարակութեան հետ առնչուող բազմազան ծրագիրներու շուրջ՝ հաճելի եւ համախմբուած մթնոլորտի մը մէջ: Առաջարկը մեծ ոգեւորութեամբ ընդունուեցաւ եւ կոչուեցաւ Ֆորում: Առաջինը կայացաւ 1995-ին: Յետագային, Ֆորումը տեղափոխուեցաւ Հայաստան, շարունակելով աւանդոյթը, բայց այս անգամ հայրենի հողին վրայ՝ Համազգայինի ազգանուէր շունչի ներքոյ:

Ֆորումի 30-ամեակի առիթով կը շնորհաւորեմ Համազգայինի Կեդրոնական վարչութիւնը եւ Ֆորումներու կազմակերպիչ յանձնախումբերը, որոնք անխոնջ ու նուիրուած աշխատանքով հետեւողականօրէն կազմակերպեցին ճամբարնե-

որը՝ երաշխաւորելով միջոցառումներու բարձր որակ, երիտասարդներու հաճելի ու բովանդակալից կեցութիւն, ջամբելով անոնց ազգային դաստիարակութիւն եւ հայկական մշակոյթ: Կը շնորհաւորեմ նաեւ Համազգայինի Լիբանանի եւ Հայաստանի գրասենեակները՝ իրենց անվերապահ եւ նուիրեալ աշխատանքին համար: Յատկապէս, կը շնորհաւորեմ Ֆորումին մասնակցող անդամները, որոնցմէ ոմանք այսօր իրենք դարձած են կազմակերպիչներ՝ մեծ յանձնառութեամբ շարունակելով գործը:

Այս առիթով կ'ուզեմ նաեւ շնորհաւորել մեր Ֆորումական Սերուժ Պաղտասարեանը՝ իր նուիրուածութեան եւ ստեղծագործական աշխատանքին համար: Ան այսօր կը ներկայանայ լուրջ եւ արժեքաւոր երաժշտական ծրագիրով մը, որ բարձր գնահատանքի արժանանալով կը հնչէ Հայաստանի Պետական Սիմֆոնիք նուագախումբի կատարողութեամբ, եւ կը ձօնեզայն Համազգայինի Ֆորումի 30-ամեակին:

Բարի երթ սիրելի Սերուժին:

Երկարաշունչ եւ արդիւնաբեր կեանք Համազգայինին եւ Ֆորումին:

ՉԵՓԻՌ Մ. ՕՅԱՆՆԵՍԵԱՆ

Համազգայինի ֆորումի նախկին պատասխանատու



30 տարիներ առաջ խումբ մը՝ Համազգային Մշակութային Միութեան առաքելութեան հաւատացողներ, տեսլականը ունեցան կազմակերպել հաւաք մը Սփիւռքի տարածքին ապրող երիտասարդներու համար: Այսօր, մենք կը նշենք այդ բացառիկ հաւաքին՝ Համազգայինի Ուսանողական Հաւաքին 30-ամեակը:

Անցնող երեք տասնամեակներու ընթացքին, ՖՈՐՈՒՄը դաստիարակեց սերունդներ, սեր սերմանեց հայ լեզուի, մշակոյթի ու ինքնութեան հանդէպ՝ դառնալով գիտելիքի, ստեղծագործութեան եւ միութեան ճառագայթող ուստան:

Թող գալիք տարիները Համազգայինի մեր մեծ ընտանիքը վերածնուած տեսիլքներով, նոր ուժով ու անսահման հնարաւորութիւններով շարունակէ զօրացնել մեր երիտասարդութիւնը եւ ամրապնդէ աշխարհասփիւռ հայ համայնքը: Սըրտանց կը շնորհաւորեմ բոլոր անոնք, որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս ոգեշնչող ուղեւորութեան:

Այս առթիւ նաեւ շնորհակալութիւն կը յայտնեմ Համազգայինի Ուսանողական Հաւաք-ի (ՖՈՐՈՒՄ) պատասխանատուներուն, որոնք վստահութիւնը ունեցան եւ տասը տարիներ առիթը տուին ինծի, որ վերահսկեմ եւ վայելեմ ՖՈՐՈՒՄի աշխատանքները մայր Հայրենիքին մէջ:

Շնորհակալութիւն եւ մեծ յոյսերով լի մաղթանքներ՝ ապագայի փայլուն յաջողութիւններուն համար:

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳԱՆԱՏԱՅԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՎԻԳԷՆ ԵՒ ՆՈՐԱ
ՅՈՎՍԷՓԵԱՆ**



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՄԱՆՈՒԿ ԵՒ ԼԻԻՍԻ
ԶՈՒԽԱՃԵԱՆ**

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՍՏԵՓԱՆ ԵՒ ԹԱՄԱՐ
ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ**



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՐԱՖԵԻ ԵՒ ՀԵՐԱ
ՄԱԽՈՒԼԵԱՆ**

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

ԽՈՐԷՆ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝

**ՇԱՀԱՆ ԹՆՃՈՒԿԵԱՆ
ՅՈՎԱՆ ԹՆՃՈՒԿԵԱՆ**

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւագոյն մաղթանքներ՝

ՇՈՒՇԻԿ ԱՐՄԼԱՆԵԱՆ



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւագոյն մաղթանքներ՝

ՀԱՅԿ ԵՆԻՔՈՄՇԵԱՆ

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաագոյն մաղթանքներ՝

ՍԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ



Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաագոյն մաղթանքներ՝

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԻԻ ԵՈՐՔԻ
Ս. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԻԻ՝
ՏԷՐ ՄԵՍՐՈՂ ՔԱՀԱՆԱՅ ԼԱՔԻՍԵԱՆ
ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ**

Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւագոյն մադթանքներ՝



ԱՖՅԻԼ AFHIL
SINCE 1998
ARMENIAN MUTUAL FUND



Ցատուկ շնորհակալութիւն իրենց նիւթական եւ
բարոյական օժանդակութեան համար.-

Փաթիլ Ենիքումշեան,

Րաֆֆի Հասրճեան,

Վիգէն Դսաւեան,

Աստղիկ Փանոսեան,

Իշխան եւ Փառլլա Եղեայեաններ,

Շանթ Լօշխաճեան:



LES FILS DE **hadidian** FRERES
BIJOUTIER





hagopian®

www.hagopianjewels.com





*Ֆորում-ի 30-ամեակի առիթով,
Լաւազոյն մաղթանքներ՝*

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**